

## ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԺԱՆՆԱ

(ԵՐԵՎԱՆԻ 181 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ)

### ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԲԵՐՈՆ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Պատմավեպի լեզուն հիմնականում ներկայացնում է գրողի ապրած ժամանակաշրջանի գրական լեզվի ընդհանուր պատկերը, նրա ողջ համակարգը, բացառությամբ այն շեղումների, որոնք ամենից առաջ պայմանավորված են պատմավեպի ժամանակային առանձնահատկություններով: Պատմավեպասանից պահանջվում է հարազատ մնալ ինչպես պատմականությանը, այնպես էլ գեղարվեստական սկզբունքներին: Պատմական վեպի գեղարվեստական արժանիքները որոշելիս գրական-գեղարվեստական այլ խնդիրների հետ միասին մեծ կարևորություն է ստանում նկարագրվող դարաշրջանի պատմական և լեզվական երանգավորման պահպանման հարցը: Այդ խնդիրները հնարավոր է լուծել երկու եղանակով՝

ա. միջավայրի ճշմարտապատում նկարագրությամբ, նիստուկացի, սովորույթների, ժողովրդական հավատալիքների ու ծեսերի, հագուստեղենի, արդուզարդի, զենք-զրահի, կահկարասիի, ճարտարապետական շինությունների ճիշտ պատկերմամբ,

բ. լեզվառճական համապատասխան միջոցներով:

Այս երկու իրողությունները փոխադարձաբար իրար լրացնող անհրաժեշտ կողմեր են՝ պարտադիր ամեն մի իսկական գեղարվեստական ստեղծագործության համար:

Պատմավեպում անցյալի լեզվական երանգավորում ստեղծվում է ոչ թե անցյալ դարաշրջանի լեզվական միավորների ուղղակի օգտագործմամբ, այլ պատմական ոճավորման միջոցներով: Իսկ պատմական ոճավորումը նկարագրվող դարաշրջանի լեզվական առանձնահատկությունների արտահայտման և խոսքի պատմական հավաստիության պատրանք ստեղծելու միջոցն է: Օգտագործելով նկարագրվող դարաշրջանի բնորոշ լեզվական զանազան իրողություններ՝ հեղինակը տպավորություն է ստեղծում, թե իր հերոսը խոսում է տվյալ դարաշրջանի լեզվով<sup>1</sup>. պատմական վեպում կարևորը այն է, որ անցյալի դրյակում ապրող, անցյալի զգեստներ հագնող, հնադարյան կերակուրներ ուտող մարդը խոսի անցյալի լեզվով, ունենա իր դարին հատուկ մտածողություն և հոգեբանություն: Եվ այստեղից էլ առաջ է գալիս պատմավեպագրության լեզվական արվեստի դժվարին խնդիրներից մեկը՝

<sup>1</sup> Տե՛ս Ֆ. Խլղաթյան, *Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը*, Եր., 1988, էջ 179:

պատմական ժամանակաշրջանի լեզվաոճական համապատասխան երանգավորում ստեղծելու համար հնաբանությունների գործածության հարցը:

Հայ լեզվաբանության մեջ հնաբանություն են համարվում արտալեզվական և լեզվական գործոնների հետևանքով հնացած բառերը, որոնք նորաբանությունների հետ բառապաշարի ոչ գործուն շերտին են դասվում<sup>2</sup>:

Մի շարք լեզվաբանական ուսումնասիրություններում առաջին խմբի մեջ մտնող հնաբանությունները ներկայացված են տարբեր անուններով, ինչպես՝ պատմական հնաբանություններ<sup>3</sup>, պատմական բառեր<sup>4</sup>, իսկ երկրորդ խմբի բառերի համար՝ հնաբառեր<sup>5</sup>, հին բառաշերտին պատկանող, գործածությունից դուրս եկած բառեր<sup>6</sup> և այլն:

«Հնաբանությունները գեղարվեստական երկերում օգտագործվում են միայն տվյալ ստեղծագործության բովանդակության անմիջական պահանջով,- գրում է Եզեկյանը,- հնաբույր բառերի գործածությունը պատմական երկի մեջ արդարացվում է նրանով, որ դրանք նպաստում են երկի բովանդակության, նրա գաղափարական նպատակադրման պարզ վերարտադրմանն ու բացահայտմանը»<sup>7</sup>:

Ստ. Ջորյանի ստեղծագործությունների լեզուն, նրա ոճը, նրա լեզվագիտական հայացքները հայ գրական լեզվի պատմության մեջ եղած ամենաինքնատիպ ու հետաքրքրական երևույթներից են. չէ՞ որ լեզուն այն կարևոր միջոցն է, որի օգնությամբ հեղինակը ստեղծում է հարուստ, համոզիչ գեղարվեստական պատկերներ, նկարագրություններ, որոնք ազդում են ընթերցողի վրա, տպավորվում նրա երևակայության մեջ: Յուրաքանչյուր հեղինակի ոճ արտահայտվում է լեզվի միջոցով, նրան հատուկ լեզվական տարրերով, իսկ ստեղծագործության լեզուն իր կոնկրետ դրսևորումն է ստանում և անհատականացվում է միայն տվյալ հեղինակին հատուկ ոճի միջոցով: Դ. Դեմիրճյանը նշել է. «Ոճը հեղինակի անձնական իրավունքն է, նրա ստեղծագործության, նյութի, սյուժեի բնույթը: Հեղինակը կարող է այստեղ ամեն տեսակ շարժումներ կատարել ազատ և ինքնակամ»<sup>8</sup>:

Այս կամ այն առիթով Ջորյանի ստեղծագործությանն անդրադարձած բոլոր ուսումնասիրողները գրեթե միաբերան նշում են նրա լեզվի հարստությունը, պատկերավորությունն ու ինքնօրինակությունը:

Գեղարվեստական երկի լեզվի բնութագրման համար բացառիկ նշանակություն ունի նրա բառապաշարի ուսումնասիրությունը, որը երկի

<sup>2</sup> Գ. Ջահուկյան, Ֆ. Խղաթյան, *Հայոց լեզու*, Եր., 1976, էջ 88:

<sup>3</sup> Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Մ. Էլոյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, Եր., 1975, էջ 234:

<sup>4</sup> Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազրույան, *Լեզվաբանական բառարան*, Եր., 1975, էջ 183:

<sup>5</sup> Ա. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 1993, էջ 206:

<sup>6</sup> Հ. Պետրոսյան, *Հայրենագիտական բառարան*, Եր., 1987, էջ 381:

<sup>7</sup> Լ. Եզեկյան, *Ընթերցողի ստեղծագործության լեզուն և ոճը*, Եր., 1975, էջ 71:

<sup>8</sup> Դ. Դեմիրճյան, *Ժամ. հայ գրական լեզվի զարգացման տեղեկանքները*, «Սով. գրակ. և արվեստ», 1951, N 9, էջ 116:

լեզվական հիմնական ատաղձն է, նրա շինանյութը: Այստեղ հեղինակը ոչ միայն կարող է բառային հոմանիշների ընտրություն կատարել, այլև նկատի ունենալ բառերի բազմիմաստությունը՝ իմաստային տարբեր երանգներով ու կապակցությամբ, հաճախ էլ, օգտվելով տվյալ լեզվի բառակազմական միջոցներից, կազմել նոր բառեր կամ բառերի յուրահատուկ, մասնակի կիրառություններ տարբեր բառակապակցություններում ու շարակարգում նոր իմաստավորմամբ: Այս ամենից ելնելով՝ միանշանակ պետք է ասենք, որ պատմական որևէ ժամանակաշրջանի երանգավորումը ստեղծելու գործում կարևոր է պատմավեպի լեզվի, մասնավորապես բառապաշարի դերը:

Մտ. Ջորյանը իր պատմավեպերում թե՛ հեղինակի խոսքում, թե՛ հերոսների երկխոսություններում գործածել է այնպիսի հնաբանություններ, որոնք մասամբ գործածական են նաև արդի գրական լեզվում կամ եթե գործածական էլ չեն, ապա ընթերցողը խոսքի մեջ առանց դժվարության հասկանում է դրանց իմաստը: Մտ. Ջորյանը մեծ վարպետությամբ է օգտվել հայոց լեզվի հարուստ բառազանձից: Վեպի բառապաշարի կորիզը դարձնելով համագործածական բառերը՝ նա առանց երկնչելու ձեռքը մեկնել է գրաբարին և ժողովրդախոսակցական լեզվին: Ջորյանը կարողացել է վերստեղծել պատմական դարաշրջանն ու նրան հատուկ մարդկանց՝ իրենց էությամբ ու մտածելակերպով:

Վիպասանի պատմական բառապաշարին դիմելն ունի ոճական-արտահայտչական միտվածություն: «Հայոց բերդը» պատմավեպում հնաբանությունները գործածված են պատմական ժամանակաշրջանին հատուկ լեզվական միջավայր ստեղծելու, կերպարների անհատականացմանն ու խոսքի ոճավորմանը նպաստելու համար:

Դարաշրջանի հավաստի երանգավորումն ստեղծելու նպատակով վիպասանի գործածած հնաբանությունները կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ պատմաբառեր և հնաբառեր:

**Պատմաբառեր:** Պատմավեպում առավել հաճախ են գործածված արտալեզվական գործոնների հետևանքով առաջացած հնաբանությունները՝ պատմաբառերը: Պատմաբառեր են բոլոր այն բառերը, որոնք անվանում են ժողովրդի կյանքի ընթացքում պատմության գիրկն անցած, միայն տվյալ պատմական ժամանակաշրջանին հատուկ առարկաներ, հասկացություններ ու երևույթներ<sup>9</sup>: Պատմաբառերը դուրս են մղվել առօրյա գործածությունից իրենց նշանակած առարկաների, երևույթների ու հասկացությունների հետ միասին, չունեն նոր համարժեքներ և գործածվում են միայն գիտապատմական և գեղարվեստական գրականության մեջ<sup>10</sup>: Վ. Առաքելյանը նկատում է. «Հնացած են համարվում նաև այնպիսի բառերը, որոնք արտացոլում են հին շրջանի փոխհարաբերություններ, կենցաղային, առօրյա և ռազմական հասկացություններ, որոնք գործողության նեղ ոլորտ ունեն. դրանք կիրառվում են

<sup>9</sup> Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, հ. 1, Եր., 1991, էջ 157:

<sup>10</sup> Ա. Մարգարյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Եր. 1993, էջ 207:

պատմական, պատմավիպասանի գրականության մեջ, և դրանց հնացումը բառերի ձևով չի պայմանավորվում, այլ նրանց իմաստային ոլորտն է հնացել:»<sup>11</sup>: Պատմավիպասանին այդ բառերն անհրաժեշտ են՝ անցյալի կյանքը վերարտադրելու, պատմական ոճավորման համար, և նա կամա թե ակամա ստիպված է լինում դիմելու դրանց: Նշված բառաշերտը, որ օգտագործվում է պատմական երանգավորումը պահպանելու նպատակով և հետագայում տերմինի նշանակություն է ստանում, կարելի է նաև կոչել պատմական ժամանակաշրջանի երանգավորումը վերստեղծող տարրեր: Հնաբանությունների այս խումբը գեղարվեստական երկում օգտագործվում է միայն տվյալ ստեղծագործության բովանդակության անմիջական պահանջով: Ստ. Ջորյանի գործածած պատմաբառերն ունեն կիրառության լայն ընդգրկում: Ըստ իրենց գործածության ոլորտի և ոճական դերի՝ դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի:

Ա. Ջարդերի և հարդարանքի առարկաների անվանումներ: Ստ. Ջորյանը, խորությամբ ուսումնասիրելով մեր և հարևան՝ պարսից և հույն ժողովուրդների՝ 4-րդ դարի հասարակական տարբեր խավերի կյանքին ու կենցաղին վերաբերող պատմիչների թողած տեղեկությունները, իր վառ երևակայությամբ ստեղծել է այդ խավերի հագուստների, զարդերի ու նիստուկացի անչափ տեսանելի ու հավաստի պատկերների գեղարվեստական արտացոլումը:

Պատմաբառերի այդ խմբին են պատկանում Ջորյանի պատմավեպում հանդիպող հետևյալ բառերը՝ ճարմանդ (կեռ), շարեր, գդակ, կապա (զգեստ, պարեգոտ), սթար (ծածկոց, սփռոց), մույկ (ոտնաման), հերկալ (երկճյուղ մետաղյա քորոց), պարեգոտ, ուլունքաշար, ճակատանոց, գլխանոց (սաղավարտ, գլխարկ), բազպան, ծիրանի (անթև զգեստ), թեզանիք (թևնոց), վերնոց (թիկնոց), տապճակ (ձիու վրա փռելու գորգ), կեխեր (թամբ), թիկնոց, խույր (գլխարկ) և այլն:

Ահա բնագրային մի հատված. «Արշակ թագավորը հագնված էր պարզ գլխին՝ միայն թագաձև գդակ, ուսերին՝ մի թուխ թիկնոց, որ առնում էր վրան ո՛չ տոն և ո՛չ հանդիսավոր օրերին: Իսկ թագուհին դրել էր նուրբ բանված մի գլխանոց և ուսերին առել էր մի պարզ մեկնոց, որը կրծքին ամրացված էր բյուզանդական ճարմանդներով»<sup>12</sup>:

Բ. Ձենքերի, ռազմական և որսորդական պարագաների անվանումներ: Այս խմբի պատմաբառերի առանձնահատկությունն այն է, որ այս առարկաները և նրանց անվանումները ընդհանուր առմամբ դուրս են եկել գործածությունից: Հենց այս խմբի բառերն են, որ մեծ մասամբ տերմինի նշանակություն են ստացել

<sup>11</sup> Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, Եր., ԳԱ հրատ., 1984, էջ 195:

<sup>12</sup> Ստ. Ջորյան, *Երկերի ժողովածու*, հ. 7, Եր., 1982, էջ 169: Այսուհետև շարադրանքի մեջ կնշենք միայն բնագրի էջերը:

և ժամանակակից լեզվում չունեն հոմանիշ ձևեր: Հնաբանությունների այս խումբը հիմնականում հատուկ է հեղինակային նկարագրություններին:

Այստեղ հանդիպում ենք զենքի այնպիսի տեսակների անվանումների, որոնք հատուկ են եղել այդ ժամանակաշրջանին, հետագայում ընդհանրապես դուրս են եկել գործածությունից: Վիպասանի կողմից այդ պատմաբանների օգտագործումը վեպի լեզվին դարաշրջանի շունչն ու ոգին հաղորդելու միտում ունի: Գործառական սահմանափակ շրջաններ ունեցող պատմաբանների մեջ թերևս ամենամեծ խումբը կազմում է ռազմական բառապաշարը: Դա պայմանավորված է վեպում ռազմական գործողությունների առատությամբ, ճակատամարտերի գրաված ծավալով:

Պատմավեպում առկա են հինավուրց զենքի ու զրահի, զորատեսակների հետևյալ անվանումները՝ պատիճ (սրունքը պատող առնապան), տեգ, նետ, աղեղ, դաշույն, աշտե, այրուձի, հեծյալ, նիզակ, սկավառակ, մկունդ (գեղարդ), մկունդախաղ, սաղավարտ (մետաղյա գլխաման), կապարճ (նետաման), գամ (մետաղյա ձող), թուր, ասպախումբ (հեծյալների խումբ), ասպատակ (հեծելախումբ), պատիչներ և այլն:

Գ. Կենցաղի հետ կապված առարկաների, չափի միավորների, հարկերի, վարչական միավորների, կառավարման հետ կապված իրողությունների անվանումները: Այս խմբի մեջ մտնող բառերը ավելի տիպական են դարձնում 4-րդ դարին յուրահատուկ կենցաղը: Հնաբանությունների այս խմբի մեջ մտնող բառերը ոչ միայն հայկական կենցաղից են վերցված, այլև պարսիկ և հարևան այլ ժողովուրդներից, որոնց հետ անմիջապես շփման մեջ էին գտնվում հայերը: Կենցաղի հետ կապված առարկաների, չափի միավորների, հարկի, վարչական միավորների անվանումները հիմնականում ճանաչողական արժեք ունեն և տիպականացնում են այդ շրջանի կենցաղը: Պատմավեպում հանդիպում ենք հետևյալ բառերին՝ գահավորակ (բազմոց), կահ (կահույք), կնքամատանի, տոհմանիշ, սուրհանդակ (լրատար), առանձնարան, հրովարտակ (փաստաթուղթ), իշխանաժողով, մարդաժողով, շեն (գյուղ), գահնամակ (պատվաստիճանների ցուցակ), ռամիկ (գյուղացի), սեպուհ, ասպարանք, խորհրդաժողով, արքունիք և այլն:

Դ. Անձնանուններ և տեղանուններ: Պատմական ժամանակաշրջանի վերստեղծմանը առավելապես նպաստում է պատմական տեղանունների և անձնանունների օգտագործումը, որոնց հաճախակի կարելի է հանդիպել պատմավեպում: Այդ անվանումների մի մասը հետագայում փոխարինվել է նորերով, հենց այս իմաստով էլ այն վերագրում ենք հնաբանությունների առաջին խմբին:

Պատմական գունավորում գոյացնող տեղանուններից և անձնանուններից են՝ Վասպուրական, Արշարունիք, Սուրմարի, Կոզովիտ, Վաղարշապատ, Բյուզանդիա, Եղջերասար, Թոնդրակ սար, Ձկնգետ, Կավաշ, Շահապիվան, Վժան գյուղ, Աղիովիտ կամ Առբերան, Լիսին բլուր, Տիգրոն, Այրարատ նահանգ,

Բագրևանդ, Հադամակերտ, Գագավոն Կամսարական, Պապակ Պալունի, Վարձա Ապահունի, Սուրակ իշխանիկ, Վահևունի սեպուհ, Համունի իշխան, Բասենի իշխան Մանեճ և այլն:

Վիպասանի ընտրած անձնանունները շատ համահունչ են ժամանակաշրջանի ոգուն և ամբողջությամբ ձուլվում են պատումային խոսքին: Ժողովրդական հերոսների համար վիպասանն ընտրել է այնպիսի անձնանուններ, որոնք պատշաճում են տեղին, ժամանակին և հերոսների սոցիալական ծագմանն ու դրությամբ:

**Հնաբառեր:** Դարաշրջանի ոգին արտահայտելու նպատակով պատմաբաններից բացի հեղինակն օգտագործել է նաև իմաստային-կիրառական այլ ոլորտների հնաբան բառապաշարային տարրեր՝ հնաբառեր, որոնց նշանակած գաղափարներն այժմ էլ կան, գոյություն ունեն, սակայն արտահայտվում են այլ բառերով և կամ մեր լեզվի զարգացման ներքին օրենքներին համապատասխան ձևափոխվել են, և ներկա ձևն ու հին ձևը տարբեր ոճական երանգավորումներ ունեն: Եթե պատմաբանների օգտագործման ժամանակ ընտրության հնարավորություն չկա, քանի որ դրանք չունեն զուգահեռ ձևեր, ապա հնաբառերի ընտրության դեպքում գրական լեզվում դրանց ունեցած նոր, հոմանիշ ձևերի փոխարեն հեղինակը նախընտրում է գործածել հին ձևերը՝ ոճական արտահայտչական նկատառումներով, ժամանակաշրջանի խոսքային երանգավորումն ապահովելու, խոսքի հանդիսավորությանը նպաստելու պահանջով: Եթե առաջին խմբի հնաբանությունները գեղարվեստական երկի մեջ ամենից առաջ կապված են պատմական իրականության ճիշտ պատկերման անհրաժեշտության հետ, ապա երկրորդի մեջ մտնող բառերը ավելի շատ կապված են երկի գեղարվեստականության բարձրացման, բովանդակությունը ավելի համոզիչ դարձնելու հարցի հետ. հենց այս իմաստով էլ բառերի հիշյալ խումբը համարում ենք պատմական երանգավորում ստեղծող ոճական լավագույն միջոցներ և դասում պատմավեպի լեզվի արտահայտչական միջոցների շարքը:

Հեղինակը այս խմբի հնաբանություններից գործածել է այնպիսիները, որոնք մատչելի են յուրաքանչյուր ընթերցողի և միևնույն ժամանակ ավելի արտահայտիչ են, քան ժամանակակից գրական լեզվի համապատասխան ձևերը: Ղ. Աղայանը գրել է. «Մենք գրաբարից կխմենք, ինչ որ կխամվի, կուտենք, ինչ որ կարելի է ուտել և մարսել, բայց ո՛չ կուտենք և ո՛չ կխամենք անմարս բաները»<sup>13</sup>:

Հնաբանությունների այս խմբի մեջ կարելի է թվարկել հետևյալ բառերը՝

երասան-սանձ, հանապազ-միշտ, հավախոս-լուսադեմ, աքլորականչ, փութալ-շտապել, ցայգ-լուսաբաց, այգաբաց, ոլոքամերկ-սրնքաբաց, գրախոս-

<sup>13</sup> Ղ. Աղայան, Տարագ, 1890, N 5, էջ 83:

գրպարտող, հարաժամ-միշտ, զի- որովհետև, բանալ- բացել, ընդոստ- շեշտակի, իցե- գուցե, առժամ- կարճ ժամանակով, ներհակ- հակառակ, բավ- բավական, կարի- ուժգին, ընդելուզել- հյուսել, գանահարել-սաստիկ ծեծել և այլն:

Խոսքին հնարություն տալու հետաքրքիր միջոց է նաև բառերի կրճատ ձևերի օգտագործումը՝ բավ- բավական, հնար- հնարավոր, այցել- այցելել, պարտ ենք- պարտավոր ենք, վրդով- վրդովված, հարկ է- հարկավոր է, մեն- ամեն, փորձ- փորձառու:

Նշենք նաև, որ վիպասանը, հարազատ մնալով ժողովրդական լեզվամտածողությանը, իր պատմավեպում՝ որպես խոսքի ոճավորման, պատկերվորման ու արտահայտչական կարևոր միջոցներ, առատորեն գործածել է հարադրություններ և դարձվածքներ, որոնք յուրահատուկ կենդանություն ու թարմություն են հաղորդել խոսքին՝ ավելի դիպուկ ու տպավորիչ դարձնելով այն:

Վիպասանը պատումի լեզվին դարաշրջանի ոգին և շունչը հաղորդելու նպատակով գործածել է հարադրավոր բայերի այնպիսի կազմություններ, որոնք ստեղծում են գրաբարյան կապակցությունների պատրանք: Նշենք դրանցից մի քանիսը.

անել- որձակոտոր անել, սուզ անել, գլխով անել, խոնարհում անել, շարժում անել, հարցում անել, քայլ անել, ճիգ անել, խնդիր անել, մատնանիշ անել,

առնել- լուր առնել, հրաժեշտ առնել, հանգիստ առնել, նկատ առնել, վեր առնել, զենք առնել, զանց առնել:

Մտ. Ջորյանի պատմավեպի լեզուն հարուստ է նաև դարձվածքների, առած-ասացվածքների, օրհնանքների և անեծքների նպատակային և տեղին գործածությամբ: Դրանք խոսքը դարձնում են սեղմ, դիպուկ, պատկերավոր, քանի որ դրանց միջոցով դրսևորվում են մեր ժողովրդի կենսափորձը, հոգեբանությունը, կենցաղն ու սովորությունները, որը շատ կարևոր է պատմական և ազգային միջավայրը, ժամանակաշրջանը պատկերելու համար:

Պատմավեպում գործածված են հնաբանությունների շարքին դասվող գրաբարյան նախդիրներով կազմություններ, դարձվածային միավորներ: Մրանք և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքում շատ բնական ու հարազատ են հնչում՝ ստեղծելով պատմական անցյալի որոշակի պատրանք: Դրանցից են՝ ի խրատ այլոց, երիցս ավաղ, ի պատիժ այլոց, ի գործ դնել, ի լուր ամենքի, երիցս անիծյալ, միով բանիվ, հավուր դատաստանով, ցանկությունդ ի բարին, ի զեն, ի ցույց, փրկել ի չարե:

Հոգևորական խավի կողմից գործածված կրոնական բովանդակության ասացվածքները, թևավոր խոսքերը կամ աստվածաշնչյան մեջբերումները, լինելով պատմականություն ստեղծող լեզվական տարրեր, համահունչ են ժամանակի ոգուն: Այսպես, օրինակ՝ «Ով սուր առցի՝ սրով անկցի...»(166): «Ով ոչ լուիցե ունկամբ լուիցե թիկամք»(252): «Հոդս ի ձեր գլուխ» (348): «Խաղաղությունն

է մայր բարյաց»(407): «Շինականները կռիվ են ելած ոչ թե կամավ, այլ մտրակի հրամանավ» (406):

Այսպիսով, հնաբանությունները՝ պատմաբառերն ու հնաբառերը, մեծ դեր են խաղացել պատմական դարաշրջանի երանգավորման գործում և որպես պատմականություն ստեղծող տարրեր՝ նպաստել են շատ տեսանելի և արտահայտիչ ներկայացնելու չորրորդ դարի իրադարձությունների, հասարակարգի, առօրյա, կենցաղային կյանքի ու պարագաների հանգամանակից, ճշմարտացի պատկերը:

Ամփոփենք: Ստ. Զորյանի «Հայոց բերդը» պատմավեպում հիանալիորեն լուծված է պատմական բառապաշարի և պատմական երանգավորման հարցը: Ճիշտ և տեղին ընտրված բառերը ոչ միայն ներդաշնակել են ժամանակաշրջանի ոգուն, այլև հնաբուրություն և պատմականության պատրանք են ստեղծել վեպում:

Никогосян Жанна- Исторические слова в романе "Армянская крепость" Стефан Зорьяна.- Статья посвящена изучению исторических слов в романе "Армянская крепость" С. Зоряна. Работа представляет исторический стиль и исторический словарь. Экзамен по историческому словосочетанию проводился в двух группах: исторические слова и старые слова. В романе "Армянская крепость" исторические и старые слова широко используются в результате предпочтений автра. Исторические слова сыграли важную роль в формировании исторической эпохи, и также способствовали тому, что события четвертого века стали заметными и выразительными. В романе Зоряна вопрос исторического словаря и исторического колорита прекрасно решен.

Nikoghosyan Zhanna- Historical wordstrip in the novel "Armenian fortress" by Stepan Zoryan. - Article dedicated study of historical wordstrip in the novel "Armenian Fortress" by Stepan Zoryan. In article presented historical styling and historical wordstrip. The study of historical wordstrip we have implemented by two group: historical words and keywords. Historical wordstrip is widely used in "Armenian Fortress" novel, it's a result of the author's preference. Historical wordstrip have played a major role in shaping the historical era, as well as contributing to making the events of the fourth century visible and expressive. In this Zoryan's novel is well solved the question of historical wordstrip and historical coloring.